



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԵԶ

Արեւմտեան Թեմիս տարիներու աւանդութեան համաձայն, Ս. Յարութեան տօնին առիթով, Երեքաբթի, 25 Մարտ 2008ի առաւօտուն Ս. Պատարագ մատուցուեցաւ «Արարատ» Տան Միջըն Յիլզի կեդրոնի պատսպարեալներուն համար, որպէսզի մեր տարեց սերունդի ներկայացուցիչները եւս մասնակից ըլլան տօնական օրերու մթնոլորտին ուղիղին:

Գլխաւորութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսնեանի, հոգեւորականաց դասու անդամները նախ տնօրինեքի արարողութիւն կատարեցին հաստատութեան հիւրանդանոցի բաժինին մէջ: Ս. Յարութեան տօնին յատուկ շարականներու երգեցողութենե ետք, պատսպարեալներուն մատուցուեցաւ Ս. Յաղորդութիւն: Առաջնորդ Սրբազնը զատկական բարեմաղթութիւններ կատարեց եւ յուշանուերներ յանձնեց Տան ընակիչներուն:

Այսուհետեւ, հաստատութեան մատրան մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ: Պատարագիչն էր Ազգ. Առաջնորդարանի քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռոն Ծ. Կրդ. Ազնիկեան, որ իր քարոզին մէջ անդրադարձաւ Ս. Յարութեան տօնի խորհուրդին եւ յատկապէս հայութեան կեանքին մէջ արտայայտութիւն գտած անոր իմաստին:

Արարողութիւններէն ետք, Յոգեւորականաց Դասը ճաշով հիւրընկալուեցաւ հաստատութեան պատասխանատուներուն ու բնակիչներուն կողմէ: Սրահին մէջ, շարականներով ու ազգային երգերով, ստեղծուեցաւ մտերմիկ ու խանդավառ մթնոլորտ: Առաջնորդ Սրբազնը անսպառ կորով մաղթեց հաստատութեան անձնակազմին, իսկ բնակիչներուն մաղթեց քաջառողջութիւն ու երկար կեանք:

### EASTER DIVINE LITURGY CELEBRATED AT ARARAT HOME

On the morning of Tuesday, March 25<sup>th</sup>, Easter Divine Liturgy was celebrated at Ararat Home in Mission Hills under the direction of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of clergy members.

The Prelate and clergy members first visited the nursing facility where they conducted the blessing of the home service, sang Easter hymns, and offered Holy Communion. At the conclusion of the service the Prelate conveyed his Easter blessings and presented the residents with illustrated cards depicting events in the life of Jesus Christ.

Divine Liturgy was then celebrated in the Chapel by Very Rev. Fr. Muron Aznikian who also delivered the sermon, in which he spoke of the profound significance of Easter. A luncheon hosted by the directors ensued during which the Prelate offered his well wishes to the directors and good health to the residents.